

1
119

ԱՐՇԱՎ ԿՈՒՏՆՏԵՍԱԹԻՆ
ԿՈՒՆՏՈՒՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ ՀԱՄԱՐ

Ս. Պ. ՍԱՀՈՒՆՔՅԱՆ



ՊԱՅԺԱՐ ՀՐԴԵՅԻ ԴԵՄ

Ա. Զ. ՈՎ. ՍԵՎ. Ն. ՈՎ. ՅԱՆ
ՅԵՐԿՐԱՅԻՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

1934

628
3u-30

628

3-30

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ԿԵՆՏՐԱԿ
ԿԵՆՏՐ. ԴՈՍԵՅԱՆՈՒԹԵԿԱ ԴՈՍՐ
III A 119 1

628.4

ՊԱՅԲԱՐ ՀՐԴԵՅԻ ԴԵՍ



1

ԱԶՈՎ - ՍԵՎԾՈՎՅԱՆ
ՅԵՐԿՐԱՅԻՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
Ռ Ո Ս Տ Ո Վ - Դ Ո Ն - 1 9 3 4

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հեղինակի կողմից	3
Խնչակես ե ծագում հրդեհը	5
Խնչից են առաջանում հրդեհները	11
Կոլտնտեսություններն ինչպես պահպանել հրդեհները	13
1. Նախազգուշացումներ վառելու ժամանակ	14
2. Նախազգուշացումներ լուսավորության ժամանակ	23
3. Նախազգուշացումներ ձիակու ժամանակ	34
4. Նախազգուշացումներ կրակի դեմ — յերեխաների նկատմամբ	37
5. Նախազգուշացումներ կրակի հետ այլ դեպքերում գործ ունենալու ժամանակ	38
Դյուզական վայրերում ինչպիսի միջոցներ պետք է կիրառել հրդեհները տարածման դեմ	40
Ինչպիսի միջոցներ կարելի չի ձեռք առնել հրդեհներ առաջանալու ժամանակ	44



Отв. редактор Г. И. Мещеряков. Редактор О. Тер Давыдов
 Сдана в печать 29/1/1934 г. Издано в печ. 25/II 1934 г.
 Издан. № 3667. Объем 17 печ. листов.
 Фобумаги А6 105x148. Зак. № 60.
 Уполкрайлит № Б-235. Тираж 1000 экз.
 Типография им. Стачки 1932 года АЧПТ в г. Ростове на Дону

48743.63

ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Կոլտնտեսություններն և նրա հասարակական սեփականություններն աչալուրջ պահպանումը հրդեհից, հանդիսանում է յուրաքանչյուր գիտակից և ազնիվ կոլտնտեսականի ուղղակի պարտականությունը: Յերբեք չի կարելի մոռանալ այն մասին, Վոր հրդեհը, վորն առաջանում է կամ կոլտնտեսությունների առանձին անդամների անփութությունից, կամ դասակարգային թշնամու ձեռքով սարքված ուղղակի չարախամ հրդեհումից, ամենակարճ ժամանակամիջոցում կարող է ամբողջապես վոչնչացնել համառ և բարեխիղճ աշխատանքի բոլոր հետևանքները: Կարող է զգալիորեն թուլանալ կոլտնտեսության տնտեսական կայունությունը, անդամներին դրնելով ծանր կացություն մեջ:

Հիշելով այդ մասին, յուրաքանչյուր գիտակից կոլտնտեսական պետք է պարզ և

փորոշակի իմանա, թե նախագգուշացման
ինչպիսի միջոցներով կարելի յե կանխել
հրդեհը, և ինչպես պետք է նրա դեմ պայ-
քարել բռնկման դեպքում:

Դրա հետ մեկտեղ ՄՏ կայանների քաղ-
բաթիւնների ղեկավարութեամբ, անհրաժեշտ
է յուրաքանչյուր կոլտնտեսութեան մեջ
լայն կերպով ծավալել հակահրդեհային հիմ-
նական ձեռնարկութեան անցնելու, հրդե-
հաշեջ գուգագներ (կամավոր խմբեր) և
խմբեր կազմակերպելու և սարքավորելու
աշխատանքը:

Այս փորձրիկ գրքում, փորը հրատաքակ-
վում է կոլտնտեսութեաններին և կոլտն-
տեսականներին ոգնելու համար, հեղինակի
կողմից տրվում են ավելի եյական խոր-
հուրդներ և ցուցմունքներ այն մասին, թե
ինչպես պետք է կոլտնտեսութեաններում
կանխել հրդեհները և ինչպես պայքարել
նրանց դեմ:

ԻՆՉՊԵՍ Ե ԾԱԳՈՒՄ ՀՐԴԵՀԸ

Մեզանից յուրաքանչյուրն իր փորձից
գիտե, փոր յեթե մրսելուց չպաշտպանվես,
կարող ես իսկույն և յեթ հիվանդանալ: Իսկ
մարդը հիվանդութեան դեմ մաքառող պայ-
քարից բոլոր դեպքերում հաղթանակող դուրս
չի գալիս:

Այդպես ել հրդեհի դեմ — յեթե զգուշա-
բար չվերաբերվես կրակին, այն ժամանակ
նա կվոշնչացնի բոլոր կարողութեանը և
հաճախ՝ իրենց անդամալուծ կդարձնի ամ-
բողջ կյանքի ընթացքում, կամ նույն իսկ
մերձմահ կխանձի կամ շնչահեղձ կանի:

Բոլորին ել հայտնի յե կրակից ստացված
մեծ ոգուտները կենցաղում — նա տալիս է
լույս և ջերմութեան: Հենց փոր մարդ ան-
հոգ է գտնվում, կրակն ընկնում է այնտեղ,
փորտեղ չպետք է ընկներ և մեծ դժբախ-
տութեան պատճառ է դառնում:

Հրդեհներ առաջացնող պատճառների ուսումնասիրութիւնից պարզվել է, վոր գյուղական վայրերում նրանք բոլորից շատ առաջանում են մարդկանց անդգուղութիւնից: Հասարակ անուշադրութիւնից կամ կրակի հետ ունեցած անփութ վերաբերմունքից յերբեմն այրվում են հսկայական գլուղեր և հազարավոր մարդիկ մնում են բաց լերկնքի տակ, առանց սպրոստի միջոցների, իսկ հաճախ՝ մեռնում են և իրենք:

«1928 թ. մայիս ամսին, Սասուլա քաղաքի (նախկին Ռյազանսկի նահանգ) կեսը համարյա թե այրվեց այն պատճառով, վոր մեկ ճոպանագործ իր բակում խեժ լեփելիս, կրակի կայծը քամու ուժեղ հոսանքի միջոցով ընկնում է հարեան մարագի հարդե տանիքի տակ: Բոցերն այնպիսի արագութեամբ կլանում են մարագը, վոր հրդեհի մեղավորը չի կարողանում նույն իսկ վորեն մեկին ոգնութեան կանչել, ուր մնաց թե հրդեհաշիջ խմբին հայտնել: Կրակի բոցերը քամու բռնկումով անցնում են դեպի հարեւան կոտուրները և այնտեղից ել հեռու, հեռու: Դեռ մեկ ժամ չանցած, քաղաքի կեսն արդեն այրվում էր կրակի մեջ:

Ամբողջապես այրվում են հազարից ավելի շինութիւններ իրենց բոլոր կահկարասիքով, վորովհետև հրդեհի արագ տարածման և կրակի ուժեղութեան շնորհիվ, վոչինչ չեր կարելի ազատել: Տաքութիւնն այնքան ուժեղ էր, վոր հաստ, կանաչ ծառերն անդամայրվում էին առանց հետքի, վորոնք շատ դժվարութեամբ էին աճել մի շարք փողոցներում: Իսկ այնտեղ, վորտեղ շատ ծառեր կային, որինակ՝ հիփանդանոցի և զերեգմանատան մոտ — հրդեհը քիչ վնասներ տվեց:

Մոտավոր հաշիւով, ամբողջ վնասը հասնում էր ավելի քան 100 հազար ռուբլու: Այդ հաշիւը կատարված է այրված շինութիւնների ինքնարժեքով միայն:

Իսկ յեթե ճիշտ կերպով հաշիւենք ամբողջ վնասը, վորը կադմում է տնային շարժական կահույքի, բանվորական սարքավորանքի, նյութեղենի, հումութի, պատրաստի ճոպանների, թոկերի և այլ շինվածքի, կերամիկաների վոչնչաչումից, այն ժամանակ կորուստը պետք է դարձնել կրկնակի:

Հրդեհի հանդիմանը դանդաղեց նաև նրա համար, վոր հրդեհաշիջ խումբը թե քանա-

կով և թե սարքավորանքով շատ թույլ եր
և բացի դրանից՝ շատ քիչ ջուր կար:

Դեռ լավ եր, վոր մարդկային զոհեր չկա-
յին, վորովհետև հրդեհը պատահեց ցերեկը
և մարդիկ կարողացան ազատվել»¹:

Ահա հրդեհի անզգուշության մեկ ու-
րիշ դեպք, վորը վերջացավ հենց իրենց
բնակիչների համար վողբերգությամբ:

«Փոքր Իգուլկին գյուղում (Նախկ. Վլադի-
միրովսկի Նահանգ) 1929 թ. մարտի 15-ին,
Նախկին դպրոցի դահլիճում, ցույց եյին տա-
լիս կինո-նկար: Այնքան մարդիկ եյին հա-
վաքվել, վոր ասեղ գցելու տեղ չկար: Քա-
ղաքացիները վոչ մի ուշադրություն չեյին
դարձնում հակիչների վրա, վորոնք աշխա-
տում եյին ամեն կերպ քանակից ավելի
մարդ բաց չթողնել:

Տեղական գուգազից հրդեհաշեջ պահակ
չեր նշանակված, վորն ըստ սովորականի,
պարտավոր ե ներկա լինել բոլոր ներկա-
յացումների, կինո-նկարների, մասսայական
զվարճությունների և բազմամարդ ժողով-
ների ժամանակ:

¹ «Հրդեհը Սասովայում» հոդված «Հրդեհային գործ» № 6
ամսաթերթ 1928 թ.

կային շատ հարբածներ, վորոնք անվերջ
խմում եյին և չեյին յենթարկվում ընդհա-
նուր կարգ ու կանոնին: Ծխում եր նաև հենց
ինքը՝ կինո մեխանիկը, վորը յեղել եր քեֆում:

Կինո-ժապավենները, կիզանյութերը, վո-
րոնք վառուղի նման դյուրավառ են, այս
անգամ անփութությամբ, կույտի ձևով ուղ-
ղակի դարսել եյին սեղանի տակ, վորի վրա
դրված եր կինո ապարատը:

Հենց այդ ժապավենների վրա յեւ ըն-
կավ չհանդգրած գլանակը: Մեկ ակնթար-
թում բոցավառվեց ժապավենը և սկսվեց
մի անտանելի խուճապ:

Բոլորն եւ անարեկված վազեցին դեպի
փոքրիկ դուռը, վորը միակ յելքն եր և
տասնյակ մարդկային մարմիններով խցա-
նեցին, փակեցին այն: Այսպիսով, դահլիճում
մնացածների համար այլևս ուրիշ յելք չլի-
նելով, բոլորն եւ այրվեցին:

Ընդամենը մեռան 111 մարդ. իսկ 16
հոգի ստացան համեմատաբար թեթեւ այրը-
վածքներ, վորոնցից եւ շատերը հետագա-
յում մեռան»¹:

¹ Հոդված «Սոսկայի աղետ կինո-սեանսի ժամանակ»
№ 43 ամսաթերթ, «Հրդեհային գործ» 1929 թ.

Ահա թե ինչ հեռախոսներն յե հասցնում
անգգուշ վերաբերմունքը կրակի հետ:

Ձնայած այս բոլոր փաստերին, մարդիկ
քիչ են մտածում նրանց մասին և նոր զրգ-
բախտությունների պատճառ են դառնում:
Հրդեհից խուսափելու համար ի՞նչ ե
հարկավոր անել:

Հենց գործն ել նրանումն է, վոր այդ
միջոցներն այնքան ել շատ չեն: Հարկավոր
է, ինչպես մենք արդեն մատնանշեցինք, ու-
շադրությամբ և զգուշությամբ վերաբերվել
կրակի հետ և թեթևամիտ չլինել, հույսը
չդնել յա բաղդի վրա:

Հարկավոր է նկատի ունենալ, վոր կրակի
հետ գործ ունենալու ժամանակ անուշա-
դրության և անզգուշության մասին, վոչ
միշտ և վոչ բոլորի կողմից է պարզաբան-
վում: Շատ հաճախ, առաջի հայացքից թը-
վում է, վոր վոչ մի անուշադրություն կամ
անզգուշություն չի եղել բայց և այնպես հրդ-
եհներ առաջացել են:

Որինակ՝ շատ-շատերը պառկելով խոտի
կամ հարդի վրա, ծխելն անուշադրություն
չեն համարում, վորովհետև նրանց կարծի-
քով շատ ուշադիր են դեպի շրջապատի ա-

ռարկաները և անհիմն կերպով վառված լուց-
կին կամ չմարած գլանակը հարդի վրա
չեն գցի:

Ահա այստեղ է, վոր թաղված է շան
գլուխը: Մենք հաճախ չենք հասկանում, վոր
անուշադրությունն ու անփութությունն
աննկատելի կերպով, մեզ համար հաղար ու
մի զթրախտության պատճառ է դառնում:

Այդպիսի ծխելուց շատ հրդեհներ են
առաջացել, վորի ժամանակ վառվել են հենց
իրենք՝ ծխողները:

Իհարկե, լինում են և կոպիտ, բոլորին
հայտնի անզգուշության դեպքեր, բայց ա-
վելի լավ է խուսափել այդ յերևույթնե-
րից, յերբ կրակը կամ բոլորովին չեն հանգ-
ցնում, կամ մոտեցնում են դյուրավառ
նյութերին:

ԻՆՉԻՑ ԵՆ ԱՌԱՋԱՆՈՒՄ ՀՐԴԵՀՆԵՐԸ

Յեթե ուշադրությամբ քննենք հրդեհի բո-
լոր դեպքերը, վորոնք առաջանում են գյու-
ղերում, ստանիցաներում, առվներում և
գյուղական այլ վայրերում, այն ժամանակ
կպարզվի, վոր այդ բոլոր հրդեհները (բացի

հրճագություններին) առաջանում են մարդկանց անգգուշությունից: Բացառություններ կազմում են միայն բնության այնպիսի հազվագյուտ յերևույթները, ինչպես, որինակ՝ կայծակի հարված և այլն:

Ինչպես ՊՍՀՄ ուրիշ վայրերում, այնպես էլ նախկին Հ. Կովկասում, հրդեհների մեծ մասն առաջանում է անգգուշ և անուշադիր վերաբերմունքից վառելու ժամանակ: 1932 թվին կատարվել է 1546 դեպք: Հրդեհների յերկրորդ պատճառն, ըստ քանակի, հանդիսանում է կրակի հետ ունեցած անուշադիր վերաբերմունքը, ինչպես, որինակ՝ ծխելը, կրակախառ մոխիր թափելը, խաբույկ վառելը և այլն: 1932 թվին ընթացքում Ազով-Սևծովյան յերկրամասում կատարվել է այդպիսի հրդեհների 1145 դեպք:

Անգգուշ վերաբերմունքից առաջացած ընդհանուր հրդեհների կեսից ավելին կատարվել է մեր յերկրամասում: Իսկ մեկ տարում վառվել է համարյա թե 3 միլիոն ռուբլու ամեն տեսակի գույք: Սհա թե ինչու մեր անգգուշ և անուշադիր վերաբերմունքը կրակի հետ — մեզ վրա շատ թանգ է նստում:

Ինչքան էլ հրդեհված տնտեսությունները պետությունից նյութական ոգնություն ըստանան, այնուամենայնիվ հրդեհից վնասված գույքը մնում է անվերադարձ: Վերականգնել այն արդեն չի կարելի, բայց փոխարինել մեկ ուրիշով հնարավոր է:

Դեռ մեր Միության աշխատավորներից յուրաքանչյուրն իր առաջ ուղղակի խնդիր չի դրել պահպանել հասարակական գույքը կրակի հետ ունեցած զգուշ վերաբերմունքով, յորն առնրյա կյանքում մեր բարեկամն է, և մեր թշնամին, հենց յոր նրա ոգտակարությունը չկարողանաք պահել իր սահմաններում:

Այս բոլորը բացառապես մեզանից է կախված: Հրդեհներից պաշտպանվել — դա աշխատավորության ընդհանուր գործն է և առաջին հերթին մեր կոլտնտեսությունների, յորովհետև քաղաքում համեմատաբար հրդեհի քիչ դեպքեր են տեղի ունենում:

ԿՈՆՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԻՆՉՊԵՍ ՊԱՀՊԱՆԵԼ ՀՐԴԵՀՆԵՐԻՑ

Հրդեհներին վերջ տալու համար, հոգատարությունը կայանում է առաջին հերթին

հրձգություններին) առաջանում են մարդկանց անզգուշությունից: Բացառություններ կազմում են միայն բնության այնպիսի հազվագյուտ յերևութները, ինչպես, որինակ՝ կայծակի հարված և այլն:

Ինչպես իՍՆՄ ուրիշ վայրերում, այնպես էլ նախկին Հ. Կովկասում, հրդեհների մեծ մասն առաջանում է անզգուշ և անուշադիր վերաբերմունքից վառելու ժամանակ: 1932 թվին կատարվել է 1546 դեպք: Հրդեհների յերկրորդ պատճառն, ըստ քանակի, հանդիսանում է կրակի հետ ունեցած անուշադիր վերաբերմունքը, ինչպես, որինակ՝ ծխելը, կրակախառ մոխիր թափելը, խաբուշկ վառելը և այլն: 1932 թվի ընթացքում Ազով-Սևծովյան յերկրամասում կատարվել է այդպիսի հրդեհների 1145 դեպք:

Անզգուշ վերաբերմունքից առաջացած ընդհանուր հրդեհների կեսից ավելին կատարվել է մեր յերկրամասում: Իսկ մեկ տարում վառվել է համարյա թե 3 միլիոն ռուբլու ամեն տեսակի գույք: Ահա թե ինչու մեր անզգուշ և անուշադիր վերաբերմունքը կրակի հետ — մեզ վրա շատ թանգ է նստում:

Ինչքան էլ հրդեհված տնտեսությունները պետությունից նյութական ոգնություն ըստանան, այնուամենայնիվ հրդեհից վոչնչացված գույքը մնում է անվերադարձ: Վերականգնել այն արդեն չի կարելի, բայց փոխարինել մեկ ուրիշով հնարավոր է:

Դեռ մեր Միության աշխատավորներից յուրաքանչյուրն իր առաջ ուղղակի խնդիր չի դրել պահպանել հասարակական գույքը կրակի հետ ունեցած զգուշ վերաբերմունքով, յորն առորյա կյանքում մեր բարեկամն է, և մեր թշնամին, հենց յոր նրա ոգտակարությունը չկարողանանք պահել իր սահմաններում:

Այս բոլորը բացառապես մեզանից է կախված: Հրդեհներից պաշտպանվելը — դա աշխատավորության ընդհանուր գործն է և առաջին հերթին մեր կոլտնտեսությունների, յորովհետև քաղաքում համեմատաբար հրդեհի քիչ դեպքեր են տեղի ունենում:

ԿՈՆՏԵՆՏՆԻԹՅՈՒՆՆԵՐՆ ԻՆՉՊԵՍ ՊԱՀՊԱՆԵԼ ԿՐԴԵՂՆԵՐԻՑ

Հրդեհներին վերջ տալու համար, հոգատարությունը կայանում է առաջին հերթին

նրանում, փորպեղի բույլ չսալ իրեն՝ հրե-
դենի առաջանալուն: Իսկ զբան կարելի չե
հասնել միայն կրակի հետ զգուշ վերաբեր-
վելով: Միաժամանակ անհրաժեշտ ե լավ
պատրաստվել հրդեհները հանգցնելու գոր-
ծին, յեթե նրանք, չնայած մեր զգուշության,
պատահական կերպով առաջանալու լինեն:

Յեթե դուք հիշեք և կատարեք ներքեում
ասված բոլոր միջոցները, այն ժամանակ
կոլանտեսություններին խոշոր վնաս հաս-
ցնելու համարձակությունից ազատված կը-
լինեք, բաց յերկնքի տակ չեք մնա և, վոր
գլխավորն ե, ձեր ամբողջ կյանքում ան-
դամալույծ չեք դառնա՝ կորցնելով առող-
ջությունը և նույն իսկ ամբողջ կյանքը:

Հրդեհները դեմ տարված պայքարում խո-
շոր նշանակություն ունեն նախագգուռա-
կան միջոցները, վորոնք առաջուց կանխում
են հրդեհների առաջանալը: Հենց այդ պատճա-
ռով ել հարկավոր ե ծանոթանալ նրանց հետ:

1. ՆԱԽԱՋԳՈՒԹԱՅՈՒՄՆԵՐ ՎԱԹԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ

Վորովհետև հրդեհների մեծ մասը կա-
տարվում ե գյուղական վայրերում վառա-
րանների անսարք և սխալ կառուցված լի-

նելու պատճառով, ուստի առաջի հերթին
նրանց վրա հարկավոր ե խիստ ուշադրու-
թյուն դարձնել:


Այստեղ պետք ե այսպիսի հերթականու-
թյուն պահպանել.

1. Վառարաններ շինելու ժամանակ, մի
վագեք նրանց վատ վորակի և աժանագին
լինելու հետևից, վորը շատ քիչ տաքու-
թյուն ե տալիս և անմիջապես հրդեհ ե ա-
ռաջացնում: Կավ վառարանը և՛ շենքն ե
տաքացնում, և՛ քամհարում ե, և՛ վառելիքն
ե տնտեսում և, վոր գլխավորն ե, հրդեհ չի
առաջացնում: Սմենալավ տաքացնող վառա-
րանը ներկայումս համարվում ե խորհրդա-
լին յեբրիտասարդ ճարտարագետ՝ Գրուվ-
Գրովմայոյի վառարանը:

2. Վառարանն անմիջապես հատակին մի
դրեք, յեթե նա աղյուսից կամ քարից
ամուր պատվանդան չունի: Առանց պատվան-
դանի վառարանը «կնստի», այն ե՝ հատակը
կարող ե փտել, զրսից և ներսից ճեղքվածք-
ներ կառաջանան և այդ ճեղքվածքների մի-
ջից կրակի բոցերը դուրս գալով, կշփվեն
շենքի փայտային մասերին և հրդեհ կառա-
ջացնեն:

3. Թե վառարանը և թե ծխնելույզը, պետք է շատ լավ առանձնացած լինեն տախտակե պատից, միջապատից, հեծանից և շենքի մյուս մասերից, փորպեսզի նրանք տաքանալուց կամ վառարանի կրակի շփումից չայրվեն (նկ. 1):

Այդ դեպքում հարկավոր է վառարանի լեմ ծխնելույզի շուրջը բարակ աղյուսե




Նկ. 1. Միակ կառուցված ծխնելույզ, փորն աղյուսե բարակ պատով դեբանից և հարդից չի բաժանված

պատ դնել, հաստությամբ փոշ պակաս, քան մեկ աղյուսի յերկարության: Յեթե շենքի հարմարությունը թույլ չի տալիս այդպիսի պատ դնել, այն դեպքում պետք է դատարկ տաքածություն թողնել ծխնելույզից մինչև

պատը, հեծանը, միջապատը փոշ պակաս քան 40 սանտիմետր:

4. Ծխահան խողովակների և անցքե




Նկ. 2. Վառարանի ծխահան խողովակի կառուցված ծխնելույզ

պատերի հաստությունը կես աղյուսի հաստությունից պակաս չպիտի լինի:



Ծխանելույզը պետք 60 սանտիմետրի չափ կտրից բարձր լինի: «Շեղակի ծխանելույզները», այսինքն՝ չարդախներում յերկար պառկացրած ծխահան խողովակները՝ փառակար են:



Նկ. 3. Միակ կառուցված շեղակի ծխանելույզ — բարակ տախտակների վրա, վորոնք կորացել են, վորից և վառարանը ճեղքվածքներ են տվել:

Ծխանելույզները պետք է լինեն «սղատ տարածության» մեջ (նկ. 2), այսինքն՝ չարդախի միջով ուղիղ բարձրանան կտուրը:

Յեթե անհրաժեշտության դեպքում հարկավոր է «շեղակի ծխանելույզ» անցկացնել, այն ժամանակ նա պետք է ունենա 2 մետր յերկարութուն: Նրան հարկավոր է տեղավորել վոչ թե տախտակեղենի, այլ հաստ և ամուր հենակների վրա, վորպեսզի «շեղակի ծխանելույզների» ծանրությունը չծռի և ծխանելույզի ներսում ճեղքվածքներ չառաջացնի (նկ. 3):

5. Չարդախի միջով անցկացրած ծխանելույզները պետք է կիրով կամ կավնով սպիտակացնել, վորպեսզի հնարավոր լինի անմիջապես նկատել ճեղքվածքները, վորովհետև այնտեղից դուրս յեկած ծուխը, ծրխանելույզի սպիտակ պատի վրա մուր է թողնում:

6. Յուրաքանչյուր վառարանի առաջ փայտե հատակի վրա պետք է ամրացնել յեղկաքե քիքեղ՝ 30 սանտիմետր լայնությամբ և 70 սանտիմետր յերկարությամբ, հաշվելով վառարանի յերկարությունը: Այդ թիթեղը պահպանում է փայտե հատակը այրվելուց՝ վառարանից կայծ ընկնելու դեպքում (քարածուխ կամ վառած փայտի կրտոր):

7. Վառարանը վառելու ժամանակ պետք է միշտ հետևել: Առանձնապես հարկավոր է

հեռակել, փորպեսզի յերեխաները վառված վառարանին չմոտենան:

8. Վառարանների մոտ չի կարելի կախել կամ դարսել դյուրավառ նյութեր, այն ե՛ փայտ, հաղուստեղեն, փալասեղեն և այլն, փորոնց պատճառով շատ հրդեհներ են առաջացել:

9. Ծխնելույզների մուրը 2 ամիսը մեկ անգամ պետք է մաքրել: Իսկ յեթե վառարանները վառում են թաց կամ խեժոտ փայտով, այն ժամանակ ծխնելույզները պետք է մաքրել ամիսը մեկ անգամ, ծայրահեղ դեպքում մուրը կարող է վառվել: Մրի այրվելը շատ ուժեղ է լինում, փորովհետև ծխնելույզի ներսի պատերը ծածկվում են խեժի շերտերով, փորը հալվաքվում է բավական շատ քանակությամբ: Նա վառվում է ճիշտ այնպես, ինչպես նավթը և տալիս է շատ բարձր ջերմություն: Դրանից ծրխնելույզները ճաքում են և կրակը ձեղքերի միջից ընկնում է փայտե շինվածքները վրա: Ծխնելույզից դուրս թռած կայծերը կարող են արագ կերպով հրդեհել, առանձնապես հարդով (զարման) կամ յեղեղնով (ղամբիշ) ծածկված կտուրը:

10. Վառարանը վառելիս կամ կրակը վառարանի մեջ բորբոքելու համար, բոլորովին չի թույլատրվում մագուլթ, նավթ կամ ուրիշ դյուրավառ հեղուկներ լցնել: Ծխնույն ե՛ վատ վառելիքը դրանից լավ չի վառվի, փորովհետև հեղուկը սկսում է փայտի կամ քարածուխի մակերևույթի վրա վառվել, իսկ նյութը մնում է նախկինը: Այնինչ այդ հեղուկների այրումից շատ ծուխ է առաջանում, փորը ծխնելույզի ներսի պատերի վրա կարող է պայթուցիկ խառնուրդ հավաքել և փոխնացնել ծխնելույզը, կամ վառարանից կըրակն ուղիղ տուն նետել:

11. Խիստ կարիք չզգալու դեպքում, ժամանակավոր վառարաններ մի դրեք: Նման վառարանները շատ վառելիք են գործածում և քիչ տաքություն տալիս, փորովհետև տաքությունն անմիջապես անցնում է՝ շնորհիվ վառարանների շուրջը գտնված բարակ պատերի: Վառարաններն իրենց շուրջը տաքացնում են այնքան, փորքան դեռ վառվում են, ինչպես դաշտում գտնված խարույկը:

Ժամանակավոր վառարանները, վատ վառելիքի հետևանքով, կեղտոտում և մուր են դարձնում սենյակը և իրերը:

Յերբ շատ խիստ անհրաժեշտութիւն կա ժամանակավոր վառարան դնել, ապա հարկավոր ե նախ՝ վառարանը աղյուսից շինել և յերկրորդ՝ նրա տակ դարսել աղյուսների յերկու շարք այն հաշիւով, վոր վառարանի ներքեից մինչև փայտի հատակը — հեռավորութիւնը լինի վոչ պակաս, քան 55 սմ:

Միաք չունի բոլորովին սենյակում թուջե և յերկաթե վառարաններ դնել առանց աղյուսե պատերի, վորոնք վոչ միայն հրդեհի տեսակից շատ վտանգավոր են, այլ և առողջութան համար վնասակար են:

Հաճախ շենքի միջով անցկացնում են թիթեղյա ծխնելույզներ, վորից հնարավոր ե խուսափել և նրա փոխարեն անցկացնել աղյուսե խողովակներ, «շեղակի ծխնելույզներին» պես, ամուր հիմքերի վրա: Յեթե թիթեղյա ծխնելույզներից խուսափել չի կարելի, ապա պետք ե հետեւել ներքեւում բերված կանոններին.

ա) հետևել, վորպեսզի ծխնելույզի կցումներն ամուր լինեն և կալով սվաղած.

բ) մեկական մետր հեռավորութիւն վրա, խողովակները մետաղալարերով ամուր կախել առաստաղից.

գ) փայտե շինութիւններից նրանք պետք ե հեռու լինեն վոչ պակաս, քան աղյուսի յերկարությամբ, այսինքն՝ 27 սանտիմետր:

Յեթե ծխնելույզն անցնում ե տախտակապատի կամ միջատաւորի միջով, այն ժամանակ այդ պատերի մեջ այնպիսի մեծությամբ անցք պիտի բացել, վորպեսզի ծխնելույզից մինչև պատը՝ 27 սմ հեռավորութիւն լրիվ կերպով պահպանված լինի:

2. ՆԱԽԱԶԳՈՒՅՑՈՒՄՆԵՐ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՆ ԺԱՄՆԵՐԻ

1. Հետևեցեք ճրագի, լապտերի և ուրիշ լուսավորութիւն տվող հարմարութիւններին, վոր նրանք փչացած չլինեն:

Նորոգեցեք նրանց փչացած մասերն ինչպես հարկն ե, առանց մի կերպ «յուրա տանելու»:

Յերբեք ձեզ չհանգստացնեք նրանով, վոր դուք կարող եք ժամանակավորապես ոգտովել փչացած ճրագի կամ լապտերի լույսով, և հնարավորութիւն ունենալու դեպքում միայն կարող եք ուղղել և նորոգում կատարել:

Այդ ինքնախաբեյությունն եւ և ուրիշ վո-
չինչ. ահա թե ինչու:

ա) հրդեհն առաջանում եւ վոչ թե նախո-
րոջ սահմանված կարգով, այլ այն ժամանակ,
իբրեւ վոր նրան բոլորովին չես սպասում.

բ) առաջին անգամ ինքդ քեզ ներշնչում
ես, յերկրորդ անգամ ավելի յես հանգստա-
նում՝ մտածելով, վոր յեթե առաջինն ան-
ցավ, ինչո՞ւ հետագայում ել անփորձ չի
սլիտի անցնի:

Ավելի լավ եւ անսարք, փշացած ճրագը
կամ լապտերն ուղարկել վարպետին նորո-
գելու: Սա շատ եժան եւ նստում, վորովհե-
տեւ թե ունեցած գույքդ ես ազատում փոր-
ձանքից և թե հրդեհի պատճառ չես դառնում:

2. Տան կարիքների համար գործածվող
նավթը, բենզինը և ուրիշ դյուրավառ հե-
ղուկները վոչ թե տանը պիտի պահել, այլ
նկուղում կամ մառանում, փակ կողպեքի տակ:

Կրակի համար շատ վտանգավոր են այդ
հեղուկները. պետք ե պահել վոչ թե ապակե,
այլ մետաղե ամանների կամ բանկաների
մեջ, վորովհետեւ ապակե ամանները հեշտու-
թյամբ ջարդվում են և հեղուկը ամեն տեղ
թափվելով, հրդեհի պատճառ ե գառնում:

Բենզինի կամ նավթի բանկաները պետք
ե փակել մետաղե պտուտակավոր խցանով,
կամ վերջինիս բացակայության դեպքում,
սովորական լավ խցանով: Չի կարելի փա-
լասով կամ թղթով խցանել բանկայի բե-
րանը, ինչպես սովորական անում են այդ:
Կարիք չկա տանը շատ նավթ կամ բենզին
պաշարել:

Դյուրատնտեսական բոլոր տեսակի մե-
քենաների, գլխավորապես տրակտորների և
ավտոմեքենայի համար շատ խնամքով պետք
ե պահել բենզինը և նավթը, վորը դյուրա-
կան վայրերում լայն գործածությունն ե գտել:

Ամեն մի տրակտորի խնամքը պետք ե
հանձնել մեկական մարդու: Մնացած կոլ-
տնտեսականները վոչ միայն առանց թույ-
լատվության ձեռք չեն տալիս տրակտորին,
այլ ամեն կերպ նպաստում են՝ տրակտորին
լավ հոգատարություն ցույց տալու համար:

Վորովհետեւ նավթը և առանձնապես բեն-
զինը ցնդվող հեղուկներ են, հետևապես նը-
րանց բանկաների բերանը չի կարելի բաց
թողնել, յեթե վոչ, նրանք արագ կերպով
կարող են գոլորշանալ և տարածվել շրջա-
պատում:

Հայտնի յեն դեպքեր, վոր նրանք անգամ 10 մետր հեռավորության վրա բոցավառվել են և առաջացրել են ամբողջ հեղուկի պայթյուն, առավել ևս, յեթե կրակին շատ մոտ են:

Տրակտորի բաքը կարելի յե բենզին լրցնել միայն ցերեկ ժամանակ, լույսով: Իսկ ծայրահեղ դեպքում, գիշերային աշխատանքների համար, բենզին կարելի յե լցնել անպայման բացողյա և այն ել՝ նավթի լապտերի փոխարեն՝ ելեկտրական լապտերի լույսի տակ: Այս կանոնը պահանջվում է նաև ավտոմեքենայի խնամատարության ժամանակ:

Դյուրավառ հեղուկները հարկավոր է ձագարով լցնել, ցանցի միջոցով: Ձագար չըլինելու դեպքում, յեթե դուք հարկադրված եք բեղունից հեղուկը լցնել բաքի մեջ, այն ժամանակ նրա բերանը պետք է ընդհուպ մոտեցնել բաքի բերանին: Ինչո՞ւ: Վորպեսզի նախ նավթը կամ բենզինը գետին չթափվի և յերկրորդ՝ կայծեր չառաջացնելու համար, խուսափել այդ յերկու ամաններն իրար խփելուց: Պատահել են դեպքեր, յերբ նման կայծերից բռնկվել է բենզինը և մեծ

դժբախտությունների պատճառ է դարձել:

Տրակտորի և ավտոմեքենայի բաքը բենզին կամ նավթ լցնելու ժամանակ, խստիվ արգելվում է ծխած ժամանակ մոտենալ նրանց, անգամ 20 մ հեռավորության վրա:

3) Յերեխոսներին մի հանձնարարեք ճրագ վառել: Նրանք յերիտասարդության և անփորձության շնորհիվ կարող են մի վորեկ սխալ կատարել և հրդեհի տեղիք տալ: Նըրանց, ընդհանրապես, պետք է շատ հեռու պահել կրակից և ներշնչել, վոր կրակին և դյուրավառ նյութերին շատ լրջորեն վերաբերվեն:

4) Ծրագի մեջ նավթը պետք է լցնել ցերեկը, վորովհետև գիշեր ժամանակ կարելի յե ավել լցնել կամ թափել նավթը, վորը շատ վտանգավոր է հրդեհի համար:

5) Ծրագը վառելու ժամանակ նավթ չլցնել. (նկ. 4) բոցը հեշտությամբ կարող է բռնկվել և պայթեցնել ճրագամանը, վորից ել հրդեհ կառաջանա:

6) Ծրագը չկախել և չդնել դյուրավառ նյութերի կամ տախտակե պատերի, առաստաղի միջապատերի, նույնպես և վառարանների մոտ:


Վառվող ճրագը կարող է հախ այրել փայտե իրերը և յերկրորդ՝ վառարանների մոտ, նավթը ճրագի մեջ կարող է ուժեղ տաքանալ և նրա մեջ հավաքված ծուխը կարող է բոցավառվել:



Նկ. 4. Ճրագն առանց հանգցնելու, նրա մեջ նավթ չլցնել, յերթի վոչ նավթը կրունկվի

Ճրագը կախելու համար մեխերը կամ կեռերը հարկավոր է շատ ամուր խփել պատերից կամ առաստաղից: Ճրագից անմիջապես վերև գտնվող առաստաղին պետք է մի կտոր թիթեղ խփել՝ ովադամ թանձր կավով: (Նկ. 5): Նույնը պիտի անել նաև

տախտակե պատին, վորտեղից կախված է ճրագը: Մեխի կամ կեռի գլուխը թեքված պիտի լինի դեպի վերև: Ինչ վերաբերվում է ճրագին, նա պետք է կախված լինի ուղ-



Նկ. 5. Չի կարելի ճրագը կախել առաստաղից առանց յերկաթե թիթեղ խփելու, վորովհետև փայտը կեռի մոտ կաթոց է սրվել և ճրագը կնկնի կամ կայրի առաստաղը:

դահայաց կերպով՝ առանց թեքվելու ձախ կամ աջ և վոչ էլ առաջ: (Նկ. 6)

Յեթե կարիք լինի լապտերով անասունների մոտ կամ ուրիշ տեղ գնալ, այդ դեպ-


քում պատահած տեղում լապտեր չի կարելի դնել: Որքնակ՝ մտուրում, պատահած տախտակի վրա, խոտի մոտ և այլն: Ավելի լավ է առաջուց մեկ մեխ խփել պատից կամ առաստաղից և լապտերը կախել, վորպեսզի նա հեռու լինի խոտից և դարմանից:

Լապտերից բացի, ճրագով, մոմով կամ լուցկիով մարագ դնալ չի կարելի: Ավելի լավ է ձեռք բերել լապտեր, վորը կոչվում է «թռչող մուկ», — նա քամուց չի վախենում, և համեմատաբար ապահով է հրդեհի դեպքում (նկ. 7):

Միշտ դորժածվող ձեռքի լապտերները պետք է լինեն ապակիած և ամուր, վորպեսզի չչարժվեն: Բակում լապտերը կարելի չէ ամրացնել հատուկ սյան կամ բակի ծածկի հիմնական դերանից: Նա այնքան ապահով տեղ պիտի լինի, վոր նրան վոչ մի բան չդուլչի — վոչ վերև բարձրացած լծափայտերը, վոչ սալի առեղները և վոչ ել լծված ձիերի աղեղները:

Լապտերի ապակիները դրսից պիտի պաշտպանվեն յերկաթացանցով, վորպեսզի լապտերին մի բան կսլչելու դեպքում ապակին չջարդվի: Իսկ յեթե ապակին ճաքի, ապա

դա կարող է պատահել միայն ցնցումից, վորովհետև յերկաթացանցը կպաշտպանի թե՛ ճրագին և թե՛ ապակուն:



Նկ. 6. Ճրագն առյուծա կախել չի կարելի
Նկ. 7. Անվտանգ լապտեր-«թռչող մուկ»

Լապտերը բարակ տախտակից կախել չի կարելի: Ծրագը հարկավոր է լապտերի մեջ ամուր տեղավորել, առանց իր տեղից շարժելու:

7. Տանը մարդ չլինելու դեպքում ճրագը, մոմը կամ լապտերը վառ չթողնել: Տանից դուրս գալուց կամ քնելուց առաջ հարկավոր է անպայման լույսը հանգցնել: Յեթե հանկարծակի հրդեհ առաջանա, այն ժամանակ շատ դժվար կլինի հանդցնել, առանց մարդու:

8. Ավելի լավ կլիներ, յեթե դործածվող ճրագն ունենար մետաղե տուփ՝ կարճ և հաստ հենարանով, իսկ ավելի լավ՝ առանց հենարանի — միայն լայն տակով:

9. Ելեկտրական լուսավորության ժամանակ զգուշացեք, այսպես ասած — «կարճ միացում» մետաղալար անցկացնելուց, վորը կարող է բռնկումներ տալ, մերկացած լարերն իրար շփելուց:

Վորպեսզի այդ լավ հասկանանք, տեսնենք թե ինչպես և շինված ելեկտրական մետաղալարերի անցկացումը: Յեթե վերցնենք մի կտոր թել, վորը հաճախ սենյակներից անցկացվում է ելեկտրական լապտեր կախելու համար, մենք կտեսնենք, վոր նա բաղկացած է յերկու հավասար թելերից, վորոնք կոչվում են մետաղալարեր, վորովհետև նրանց միջով անցնում է ելեկտրական

հոսանքը: Մետաղալարի մեջ գտնվում է պղնձե լար, վորը ծածկված է ուտինե թաղանթով և վերջինս ել փաթաթված է բարակ թելով: Այդ ուտինե թաղանթը թելալին փաթաթով՝ կոչվում է ելեկտրականություն սանող լարի մեկուսացում:

Դա արվում է նրա համար, վորպեսզի լարերի միջով գնացող ելեկտրական հոսանքը չանցնի այն առարկաներին, վորոնց հետ մետաղալարը շփում է ունենում:

Յեթե մերկացրած մետաղալարը կպչի իր նման մեկ ուրիշ մերկ լարի, այն ժամանակ այդ մետաղալարերի միջով գնացող յերկու ելեկտրական հոսանքները կմիանան իրար: Իսկ հոսանքների միացումը կառաջացնի ուժեղ կրակի բռնկում, կայծակի հարվածի նման, և կայրի մոտիկ գտնված դուրավառ առարկաները:

Դրա համար ել հարկավոր է շատ զգուշությամբ վերաբերվել դեպի ելեկտրական լարերը, այսինքն՝ նրանց ձեռք չտալ, նրանցից բան չկախել, նրանց մոտ կամ առանքում մեխեր չխփել կամ թե ելեկտրականությունը փչանալու դեպքում, յեթե մասնազետ չեք, վոչ մի ուղղում չանեք:

Հարկավոր է ելեկտրալարերին խոնավությունից պահպանել, յեթե վոչ՝ խոնավությունը դեպի իրեն է քաշում ելեկտրական հոսանքը: Խոնավությունը կարող է ծառայել վորպես կամուրջ, վորի միջոցով մեկ ելեկտրալարի հոսանքը կարող է միանալ մի ուրիշ լարի հոսանքին և առաջացնի «կարճ միացում»:

Բացի դրանից, խոնավությունը փչացնում է նաև մետաղալարի արտաքին փաթաթոցը, վորը թացությունից սկսում է փտել և կարող է մերկացնել ելեկտրալարը:

Շենքը սվաղելու և սպիտակացնելու դեպքում, պատի վրա գտնված ելեկտրական լարերը պետք է հանել, վորովհետև կիրը և կավիճը ծածկում են մետաղալարը և քայքայում նրանց՝ մեկուսացնելով ելեկտրակա-
նություն տանող լարի հոսանքը:

3. ՆԱԽԱԶԳՈՒԹԱՅՈՒՄՆԵՐ ԺԽԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ

Անդգուշ ծխելու ժամանակ շատ հաճախ հրդեհներ են պատահում: Նախկին Հյուսիսային Կովկասի (ներկայումս Ադու-Սեծովյան) յերկրամասում անդգուշ ծխելու ժամա-

նակ 1932 թվին յեղել և 783 հրդեհի գեպը, այսինքն՝ 2 — 3 հրդեհ ամեն օր:

Այդպիսի հրդեհների պատճառները հանդիսանում են բացառապես ապշության և հանցագործ անզգուշության հետևանքով: Նման շատ հրդեհներ կատարվում են յերեկանների ձեռքով, վորոնք սկսում են գաղտնի և մեկուսացած անկյուններում ծխել:

Բայց հրդեհների մեծ մասը կատարում են հասակավորները, վորոնք առանց վախենալու ամեն տեղ ծխում են, որինակ՝ խոտաշրջի մեքենայի վրա, կալսիչ մեքենայի ելեկտրական հոսանքի մոտ, ջրաղացներում և նույն իսկ տրակտորների մոտ գտնվող ավտոգարաժում, չխոսելով արդեն այն մասին, թե վորքան վտանգավոր և անթույլատրելի յի ծխեն այդպիսի տեղերում: Յուրաքանչյուր ծխող պետք է միշտ և ամենուրեք, անգամ այնտեղ, վորտեղ ծխելը թույլատրված է, պահպանել ամենախիստ նախազգուշյուն՝ հրդեհներ առաջանալու դեմ:

Կարճ ասած, հարկավոր է ղեկավարվել հետևյալ կանոններով:

1. Զհանդգրած ծխախոտի գլանակը և լուցկին գետին մի գցեք: Չեղ համար

սովորութիւնն դարձրեք լուցկին և գլանակը
այստեղիս, անպայման վոսնով տրուի:

2. Մի ծխեք այն տեղերում, վորտեղ կը-
րակավախ կամ դյուրավառ առարկաներ և
նյութեր կան Ուրինակ՝ խոտ, դարման, տա-
շեղ, նավթ, սկիպիդար (բեկեղի յուղ) և
այլն:

3. Մի ծխեք յերբեք քնելուց առաջ ան-
կողնում պառկած: Դուք կարող եք աննկա-
տելի կերպով քնել չհանգցրած գլանակը
ձեռքին և զցելով այն անկողնի մեջ, հրդեհ
առաջացնել:

4. Ծխելու ժամանակ վառված գլանակը
մի դրեք ամեն պատահած տեղում, վորով-
հետև պատահաբար կարելի յի մոռանալ
այդպիսի գլանակը և նրա կրակը դյուրա-
վառ առարկաների մոտ գտնվելով, կարող ե
հեշտութեամբ հրդեհ առաջացնել:

5. Յերեխաներին գլանակ և լուցկի չտալ

6. Ճանապարհ գնալիս — դնալը, ավ-
տոմոբիլում, ձիու վրա — մի զցեք գետին
հշանգցրած գլանակը և լուցկին, վորովհետև
նրանք ճանապարհից դուրս՝ դյուրավառ
առարկաների վրա ընկնելով, կարող են հր-
դեհ առաջացնել:

4. ՆԱԽԶԳՈՒՇՈՒՄՆԵՐ ԿՐԵՆԻ ԳԵՄ — ՅԵՐԵԽԱՆԵՐԻ ՆԱՇՄԱՐԻ

1. Յերեխաների նկատմամբ շատ զգուշ
յեղեք և նրանց ձեռքը կրակ մի տվեք, ինչ
ձևով ել վոր ուղղում ե լինի:

Կրակի հետ ունեցած յերեխաների չարա-
ճիւղութիւնից շատ հաճախ հրդեհներ են ա-
ռաջանում, վորովհետև յերեխաները սովո-
րաբար կրակի հետ խաղում են մեկուսա-
ցած տեղերում, վորպեսզի հասակավորները
չնկատեն, չխանգարեն կամ չպատժեն նը-
րանց: Դրա համար ել այդպիսի հրդեհներն
սկզբում յերկար ժամանակ աննկատելի յեն
մնում և միանգամից մեծ տարածութիւն-
ներ են ընդգրկում:

2. Յերեխաներին թույլ մի տվեք վառարա-
նին մոտենալ և մի հանձնարարեք նրանց
վառարան վառել:

3. Յերեխաների մեջ ներշնչեք լուրջ վե-
րաբերմունք դեպի կրակը: Յերեխան պետք
ե իմանա, վոր կրակը վտանգավոր ե և
նրա հետ խաղալ չի կարելի:

4. Յերեխաներին մենակ մի թողեք շեն-
քում, վորտեղ կրակ կա (ճրագ, վառարան

և այլն)։ Երանց մի հանձնարարեք նաև խարույկներին՝ հսկելը, ածուխ խանձելը, ամաններ յեռացնելը, հաց չորացնելը և այլ աշխատանքներ, վորոնք կապված են կրակի դործածության հետ։

5. ՆԵՐՍԷՅԳՈՒՇԵՏՈՒՄՆԵՐ ԿՐԵԿԻ ՀԵՏ—ԱՅՆ ԳԵՊ-ՔԵՐՈՒՄ ԳՈՐԺ ՈՒՆԵՆԸՆՈՒ ԺԵՄԵՆԸ

1. Շենքերից կամ բացողյա տեղերում դարսած դարմանից, խոտից, փայտից և այլ դյուրավառ նյութերից և մթերքներից 10 մետր հեռավորության վրա գտնվող բակերում խարույկներ մի վառեք։

Անտառում խարույկ անելու ժամանակ հատուկ ուշադրություն դարձրեք։ Հիշեք, վոր անտառային հրդեհները հսկայական տարածություններ են ընդգրկում, վորչհացնում են վոչ միայն մեզ համար թանգարժեք անտառը, այլ և այն բոլորը, ինչ վոր պատահում է ճանապարհին։ Հաճախ այդպիսի հրդեհներից ամբողջ գյուղեր են կործանվում, վորոնք ընկած են անտառների մոտ։ Հիշեք, վոր անտառային հրդեհների դեմ պայքարը դժվար է և շատ մարդ է պահանջում։

2. Ինքնայեռը մի դրեք խոտի մեջ, բա-կում, շինությունների մոտ կամ այլ տեղերում, վորոնք նշանակված չեն ինքնայեռներ յեռացնելու համար։ Ինքնայեռը կարելի չե դնել մշտական պատե վառարանների մոտ, վորպեսզի նրա ծխներույզը դրվի հատկապես այդ նպատակի համար շինված անցքի մեջ։

3. Վառարանների միջից հանած մոխիրը և ածուխը մի թափեք վորտեղ պատահի, վորովհետև քամին կարող է առկայծել և տանել դեպի դարմանը, վորից հրդեհն անխուսափելի չե։ Ավելի լավ է մոխիրը թափել բանջարանոցում կամ շինությունից հեռու մեկ ուրիշ տեղ։ Մոխիրը թափելու ժամանակ, յեթե ձեզ մոտ ջուր չկա, այն դեպքում նրան ծածկեք հողով կամ ավազով։

Բոլորից լավ է հիշել, վոր մոխիրը հանդիսանում է ամենալավ պարարտանյութը և դրա համար ել նրան հատուկ փոսերում հավաքելը կհանդիսանա վոչ միայն հակահրդեհային միջոց, այլ և կոլտնտեսային դաշտերի համար զգալի ոգուտ կրերի։

4. Վառարանի կրակն ածուխ պատրաստելու համար, լցրեք մետաղե ամանի մեջ և բերանը մետաղե կափարիչով շատ ամուր

ծածկեցեք: Յեթե ածուխով ամանը ցանկա-
նում եք թողնել փայտե հատակով շենքի
մեջ, ապա նրան պետք է դնել վոչ թե ուղ-
ղակի հատակին, այլ յերկու աղյուսի վրա:

5. Բնակելի տների չարդախներում վո-
չինչ մի դրեք, վորովհետև դուք դրանով
շատացնում եք հրդեհի առաջացման վտանգը
և գժվարացնում նրա հանգցնելը:

6. Բակերում, ճանապարհներին. և նըր-
բանցքներում անկանոն կերպով մի թափեք
դարմանը, խոտը, փայտը, շինարարական
նյութերը և այլ առարկաները, վորոնք ավե-
լորդ տեղ են բռնում և կրակի համար կեր
հանդիսանալով, ոգնում են հրդեհի տարած-
մանը:

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՎԱՅՐԵՐՈՒՄ ԻՆՉՊԻՍԻ՝ ՄԻ- ՋՈՑՆԵՐ ՊԵՏԲ Ե ԿԻՐԱՌԵԼ ՀՐԴԵՀՆԵՐԻ ՏԱՐԱԾՄԱՆ ԴԵՄ

Մենք արդեն տեսանք, վոր կրակի հետ
ունեցած անզգուշ և անուշադիր վերաբեր-
մունքը մեծ հրդեհների պատճառ է հանդի-
սանում: Ինչպես ել վոր նրանից խուսափե-
լու լինենք, այնուամենայնիվ վտանգը դո-

յություն ունի և հրդեհներն առաջանում են
նաև այդ պատճառներից անկախ:

Վորպեսզի ավելի լավ պատրաստվենք
անկոչ հյուերին դիմավորելու և նրան լավ
հարված տալու, պետք է կոյտնտեսությու-
նում ամբողջ տնտեսությունն այնպես կապ-
մակերպել, վոր կրակը վոչինչ չկարողանա
տնել: Իսկ յեթե ծայրահեղ դեպքում հրդեհ
առաջանա, նրան ավելի հեշտ լինի հանգցնել:

Յեթե ճշտությամբ կատարենք ներքևում
բերած բոլոր կանոնները, այն դեպքում
հրդեհը մեծ վնաս պատճառել չի կարող:

1. Նոր շենքեր կառուցելու ժամանակ,
պահպանեցե՛ք նրանց հակասների միջեմ
վորո՛ւ սա՛րաճուրթյուն, վորպեսզի հրդեհ ա-
ռաջանալու ժամանակ, կրակը չկարողանա
այրել ամբողջ շենքը:

2. Կոյտնտեսությունում, յուրաքանչյուր
տնտեսության շուրջը տնկեցե՛ք արագ աճող
տերևախիտ ծառեր: Հրդեհի ժամանակ նը-
բանք, ինչպես պատեր, կշըջապատեն տունը
և կազատեն հրդեհից (նկ. 8):

Այդպիսի ծառեր տնկելը ծախսի տեսա-
կետից համարյա թե վոչինչ չարժե և մա-
նավանդ՝ խնամք չի պահանջում:

3. Կոյտնտեսութիւնում ամբողջ շինութիւնը ծածկեցեք կրակին դիմացող նյութերով, վորովհետև հրդեհը բոլորից շատ վտանգ է սպառնում կտուրներին: Յեթե թիթեղներ կամ կղմինտը (черепица) չկա, այն ժամանակ տանիքը ծածկելու համար



Նկ. 8. Ծառերով շրջապատված տուն, վերն ապաստվեց հրդեհի ժամանակ

գործադրեք կավից և դարմանից պատրաստված շաղախ: Վերջինս և՛ ամուր և և՛ անվտանգ հրդեհից:

Թե ինչպես պատրաստել կավի շաղախը, այդ մասին ձեզ կարող է ցուցմունք տալ

հողային վարչութիւնը: Բացի այդ վերոհիշյալից, կարելի յե դիմել նաև գյուղատնտեսին, ապահովագրական տեսչին կամ հրդեհաշեջ խմբի վարչության:

4. Մտածեք ջրի մասին, վորովհետև առանց նրան հրդեհի դեմ պայքարելը շատ դժվար է:

Մոտակա գետերի և լճերի կողքին հարմար ջրամբարներ կառուցեք:

Յեթե լավ բնական ջրամբարներ չկան, այն ժամանակ մոտակա փոսերի մոտ ջրհորներ պատրաստեք, վորպեսզի հնարավոր լինի այնտեղ անձրևային ջրեր հավաքել:

Այդպիսի ջրհորներն այնքան ել թանգ չեն նստում, վորովհետև գլխավոր նյութեր՝ ավազ, հող, ցախ, դարման շատ կան:

5. Վերջապես հատուկ ուշադրութիւն դարձրեք կոյտնտեսային հրդեհաշեջ խմբեր կազմակերպելու և սարքավորելու վրա:

Հրդեհաշեջ խմբեր կազմակերպելը շատ հեշտ է և այդ առթիւ ծախսեր շատ քիչ են պահանջում: Իսկ նրանից շատ ոգուտ կարելի յե ստանալ, վորովհետև կրակի դեմ հեշտ է պայքարել ընդհանուր և կազմակերպված ուժերով և վոչ ցաքուցրիւ կերպով:

**ԻՆՉՊԻՍԻ ՄԻՋՈՑՆԵՐ ԿԱՐԵԼԻ ՅԵ ԶԵՌԲ
ԱՌՆԵԼ ԿՐԴԵՅՆԵՐ ԱՌԱՋԱՆԱԼՈՒ
ԺԱՄԱՆԱԿ**

Հիմա տեսնենք, թե ի՞նչ ե հարկավոր ա-
նել, յերբ հրդեհ ե առաջանում կամ կաս-
կածներ կան նրա առաջանալու մասին:

1. Յեթե զգուժ եք այրված բանի հոտ,
այն ժամանակ ճիշտ կերպով իմացեք այդ
այդ հոտի պատճառները:

Յեթե ծուխը կամ այրվածքի հոտը փո-
ղոցից կամ ուրիշ տեղից ե գալիս (ինքնա-
լեռից կամ ծխնելույզներով ծածկված վա-
ռարանից), առանձնապես անհանդստանալու
կարիք չկա. հարկավոր ե միայն շտապ կեր-
պով քամհարել շենքը:

Յեթե նայելու ժամանակ հայտնաբերե-
ցիք վառելիքի կամ լուսավորության ինչ
վոր անսարք կամ փչացած տեղեր, այն
ժամանակ հարկավոր ե շտապ կերպով մի-
ջոցներ ձեռք առնել փչացած տեղերը նորո-
գելու համար և նրանցից լերբեք չոգտվել:

2. Յեթե տանը հրդեհ առաջանա, այն ժա-
մանակ հարկավոր ե անմիջապես հանգցնել
և վոչ թե գլուխը կորցրածի պես «պտրտ-

վել» և տանից բոլոր իրերը դուրս թափել:
Շատ լավ պետք ե հիշել, վոր սկզբում հըր-
դեհը շատ հեշտ ե հանգցնել, անգամ մեկ
դույլ ջրով: Իսկ յեթե նրա հարմար բոլեհ
ձեռքից բաց թողնես, չես կարող հանգցնել
նույնիսկ ամբողջ գետի ջրով:

Իրա համար ել արագ կերպով հանգցրեք
հրդեհը և անմիջապես ոգնություն կանչեք:
Յեթե գյուղում հրդեհաշեջ խումբ կա, առա-
ջին հերթին նրան պետք ե կանչել: Իսկ
յեթե չկա, պետք ե հարևանին շտապ կան-
չել ոգնության և վոչ թե խուճապ ստեղծել,
անիմաստ աղմուկ բարձրացնել և գժվածի
պես վազվզել դես ու դեն:

Տան իրերն ազատելու ամենալավ միջոցը
հանդիսանում ե նա, վոր դուք արագ կեր-
պով հանգցնեք փոքր հրդեհները: Իրա վրա
հարկավոր ե հատուկ ուշադրություն դարձ-
նել և վոչ թե իրերը փողոց շարել: Միև-
նույն ե, իրերից շատը փրկել չես կարող,
իսկ դանդաղելու դեպքում, հրդեհն անմի-
ջապես կլափի բոլորը:

3. Յեթե հրդեհն առաջացել ե վոչ թե
տանը, այլ դրսում, այն ժամանակ գլխավոր
ուշադրությունը մինչև հրդեհաշեջ խմբի

գալը, պետք է դարձնել նրա վրա, վորպեսզի պաշտպանել հրդեհից մոտակա շենքերը:

Յեթե այդ շենքերի տանիքները ծածկված են դարմանով և յեղեգնով, այն ժամանակ դրանց պետք է առաջին հերթին պաշտպանել: Այնտեղ հարկավոր է մարդիկ ուղարկել, վորոնք իրենց հետ ավելներ կամ ձյուղեր ունենան, բոցերը և դարմանի այրվող կապոցները ցրելու համար:

4. Յեթե այրվում է ծխնելույզի միջի մուրը, ավելի լավ է չխանգարել և թույլ տալ նրան մինչև վերջ այրվի: Դրանից վտանգ չկա, յեթե ծխնելույզը վոչ մի ճեղքվածք չունի և տանիքը ծածկված է թիթեղով, կղմինտրով կամ կավով:

Վորպեսզի ճեղքվածքի միջից չարգախուժ կրակ չընկնի, հարկավոր է այնտեղ մի մարդ նշանակել ավելի և ջրի հետ միասին, վորպեսզի նա ջրով և ավելով ցրի թուշող կայծերը:

Իսկ յեթե տանիքը դարմանից է շինված, հարկավոր է արագ կերպով հանգցնել այրվող մուրը: Դրա համար հարկավոր է առաջին հերթին հանգցնել վառարանի միջիկրակը, վորովհետև ծուխը և գոլորշին միայնով վառարանում հանգցնում են կրակը:

Իսկ յեթե այդ միջոցը չի ոգնում, հարկավոր է ամուր կերպով փակել ծխնելույզի բերանը, այսինքն՝ փակել կափարիչը, դուռը և փակիչը: Այն ժամանակ վառվելն անտիճանաբար կանդ է առնում, վորովհետև ծխնելույզի մեջ ող չի անցնում, առանց վորի այրումն անհնար է: Դրա հետ միաժամանակ, անպայման պիտի հանգցնել վառվող կայծերը և տանիքի վրա թափվող մուրը:

Վոչ մի դեպքում չի կարելի ծխնելույզի մեջ ջուր լցնել, վորովհետև թեժացած աղյուսներն իրենց վրա թափվող ջրից ճաքճաքում են այնպես, ինչպես ապակին և առաջացած ճեղքերի միջից կրակն ընկնում է շարդախի մեջ:

Ձի կարելի նաև ծխնելույզը վերեից ծածկել, վորովհետև ուժեղ այրվելուց դոյացած գաղը կարող է կրակի հետ միասին վառարանի միջից դուրս թռչել տան մեջ:

5. Յեթե հանկարծ վառվելու լինի թափված նավթը, բենզինը, սկիալիդարը և ուրիշ կրակից վախեցող յուղանման հեղուկներ, այն ժամանակ չպետք է ջրով հանգցնել, վորովհետև նա, միևնույն է, լողալով ջրի յերեսին, շարունակվում է այրվել:

Ավելի լավ ե վառված տեղերում ավագ հոդ, կամ ձյուն ցանել: Իսկ յեթե այդ հանգցնող նյութերը ձեռքի տակ չգտնվեն, կարելի յե վառված դեղերի վրա անմիջապես փռել վերմակ, վերաբկու, գուրգ կամ մի վորեւե խիտ գործվածք և նրանց վրա ջուր շաղ տալ:

Այդ դեպքում այրվելը կդադարի, վորովհետեւ այրվող հեղուկները հանգչում են ող չլինելու պատճառով:

6) Յեթե մարդու վրայի շորերն են այրվում, այդ դեպքում չպետք ե վազել, վորովհետեւ արագ շարժումից կրակն ավելի բորբոքվում ե:

Վառվող մարդուն պետք ե անմիջապես փաթաթել մի վորեւե շորի կամ վերմակի մեջ և այդ վիճակում պահել 2—3 րոպե, իսկ հետո զգուշությամբ նրա վրայից հանել վառված շորերը և այրված տեղը դնել տրորած գետնախնձոր, հանգցրած կիր կամ սոդա՝ չպաթեցնելով այրված տեղերի վրա առաջացած բշտիկները:

Իսկ յեթե մեծ այրվածքներ կան, հարկավոր ե անմիջապես տուժողին տեղափոխել մոտակա հիվանդանոցը կամ ամբուլատորիան:

7) Խոտը կամ դարմանի դեզն այրվելու ժամանակ, հարկավոր ե նախ վառվող դեզը թրջել լեքեսից, իսկ հետո քիչ-քիչ դուրս քաշել ամբողջ խոտի կույտը՝ վրան ջուր շաղ տալով:

8) Յեթե հրդեհի ժամանակ տանը անչափահաս յերեխաներ, պառավներ և հիվանդներ կան, այն դեպքում նրանց առաջին հերթին հարկավոր ե տանել մի վորեւե անպտանգ սեղ, հրդեհից հեռու: Նրանց շատ արագությամբ պետք ե դուրս տանել կրակի միջից, ծածկելով մի վորեւե խիտ գործվածքով: Իրեն ազատողին նույնպես հարկավոր ե հագցնել մի վորեւե խիտ գործվածքով հագուստ: Վառվող շենքի մուտքի առջև պետք ե ջուր շաղ տալ: Ծխից շնչահեղձ չլինելու համար, հարկավոր ե խոր շունչ քաշել և հետո մտնել շենքը, աշխատելով այնտեղ չշնչել, վորովհետեւ այնտեղ կարելի յե թունավոր դադ ներշնչել և կորցնել գերակշռությունը:

9) Տնային կենդանիներին ազատելու համար այն մարդը պետք ե զնա, վորին կենդանին լավ ե ճանաչում, վորովհետեւ նրա հետեւից գոմից ավելի շուտ դուրս կգա:

Համենայն դեպս, այստեղ նույնպես պետք է ձեռք առնել մի քանի նախադրուշակա՛ն միջոցներ, այսինքն՝ նրա աչքերը փակել պարկով, խորով կամ ձեռքով և արագ կերպով վաճառվող տեղից դուրս տանել:

Խոշոր յեղջուրավոր անասունին շատ հեշտ է ազատել, վորովհետեւ՝ նրանք քիչ են անհանգստանում: Մանր յեղջուրավոր անասունին և մատղաշին ավելի լավ է ձեռքերի վրա դուրս տանել, վորովհետեւ մեկ-մեկ գոմից հանելը շատ լեւկար կտեւի: Իսկ հոտով քշելը դժվար է, վորովհետեւ վախից նրանք ցրվում են: Յեթե հնարավորութիւն կա քանդել մարագի կամ գոմի պատը, կրակի հակառակ կողմից, այն ժամանակ պետք է այդ միջոցից ոգտվել առաջի հերթին, վորովհետեւ անասունը առջեւում կրակ չտեսնելով, հեշտութեամբ է դուրս գալիս գոմից:

10) Հրդեհը հանդցնելու դեպքում, պետք է փնտռել նրա առաջացման և ավելի ուժեղ այրման սեղը: Այդ դեպքում հրդեհը կարելի չէ ավելի հաջողութեամբ և արագ հանդցնել: Հանդցնելու ժամանակ պետք է շատ խնայողութեամբ ջուր լցնել, վորովհետեւ

գյուղում հրդեհի ժամանակ ջուրը միշտ ել չի բավարարում: Բացի դրանից, ավելորդ շաղ տված ջուրը վատացնում է միայն հանդցնելը, դժվարացնելով վառվող մասերի առանձնացնելը:

11) Կատարեցեք ոգնութիւն յեկող հրդեհաշեջ խմբի բոլոր կարգադրութիւնները: Չառարկեք, յեթե տարածվող հրդեհի կանխման և ամբողջ գյուղական բնակչութեան ազատութեան համար — հրդեհաշեջ խումբը կսկսի քանդել մի շարք շինութիւններ, վորպէսզի գյուղի այրվող մասն անշատի դեռ վրակով չբռնկված մասից: Այսպիսի պայմանների ժամանակ, յերբ քանդվում է շէնքը, սրվում է առդանովադրական վարձատրութիւնը:

Ընդհանուր աշխատանքի ժամանակ հարկաւոր է ոգնել իրար և համերաշխ լինել ամբողջ կողեկաւով:

12) Տրակտորի զարաժում հրդեհ առաջանալու կամ առանձին տրակտորի այրման ժամանակ, մեքենայի մասերը ջրով մի հանդցրեք, վորոնք պարունակում են բենզին կամ հովթ, այլ ծածկեք այդ ավազով և հողով: Վառվող տրակտորը շինութիւնից,

մնացած տրակտորներից և տեղերից պետք է հեռու տեղ տանել, վորոնք իրենց մեջ պարունակում են դյուրավառ նյութեր:

13. Յեթե հացի արտերը կամ դեղերը կայրվեն, կողքի արտերն ազատելու համար պետք է շատ արագությամբ տրակտորով հերկել վառվող հողամասը, կրակի առաջն առնելու համար:

Ահա այն բոլոր եյական խնդիրները, վոր պետք է առաջին հերթին իմանալ հրդեհի դեմ պայքարելու համար: Կրկին անգամ ուշադրությամբ կարդացեք և հիշեք, յեթե վոչ բոլորը, գոնե կարևոր խորհուրդները, վորոնք առաջադրվում են այս գրքում: Նրանք բոլորն ել հեշտ յրագործելի յեն և ծանր չեն:

Յեթե դուք նպատակ եք դրել պահպանել կոլտնտեսության անձեռնմխելի բոլոր հասարակական սեփականությունը, յեթե դուք չեք ցանկանում մնալ բաց յերկնքի տակ, զրկվելով ձեր ընտանիքից և ուրիշներից, այն ժամանակ ինքներդ պահպանեք և հետևեք ուրիշներին, վորպեսզի նրանք խիստ կերպով իրագործեն դեպի կրակն ունեցած պզուռ վերաբերմունքի բոլոր կանոնները:

« Ազգային գրադարան



NL0276749

Գինը 30 Կոպ.
Цена 30 Коп.

13. 969

6675

На армянском языке

С. П. Ярославский

НА БОРЬБУ С ПОЖАРАМИ

АЗОВО-ЧЕРНОМОРСКОЕ
КРАЕВОЕ КНИГОИЗДАТЕЛЬСТВО

ԳՐԱԴԱՆԺԱՅԸ

ԴՈՍՏՈՎ-ԴՈՆ ՄՈՍԿՈՎՍԿԱՅԱ ՓՈՂ, 53

ԳՐԱԿԵՆՏՐՈՆ (ԿՆԻԳՈՑԵՆՏՐ)